




**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԳԱԿԸ
ՊՈԼՍԱՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
ԶՈՐԱՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹՅՎ**

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՇՆՈՐՀԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԵԱՆԻՆ,
ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԷԻՈՅ, ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱԽՈՐԱՅ
ԵՒ ԱՌ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ,
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ԵՒ
Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Փառք Ամենակալին Աստուծոյ, որ Իր հովանիին ներքև ապանով ու խաղաղ կը պահպանէ մեր սուրբ եկեղեցին և կը լուսաւորէ մեր հաւատացեալ զաւակներուն կեանքի ճամբան, յաջողութեամբ պսակելով անոնց բարի ու առաքինի ձեռաց գործերը:

Մենք յոյժ երջանիկ ենք, որ սուրբ Հոգւոյ ներշնչմամբ, նախաձեռնած էք յիշատակել ու տօնախմբել չորս հարիւրամեակը առաջին հայերէն տպագրութեան ի Կ. Պոլիս տրեւչան ու ժիր աշխատանքով մեր եկեղեցւոյ շնորհալի ապաստոր՝ Արգար Դպիր Թոխաթեցիի, որ 1567-ին առաջին անգամ ըլլալով Վոսփորի ափերուն հայկական տպարան հաւատարեց և լոյս ընծայեց իր «Այրբէնարան»-ը կամ «Փոքր քերականութիւնը»:

Հայ տպագրութեան արուեստը, սկիզբ ստած Վենետիկի մէջ ԺԶ դարու արշալոյսին, իր սրանշէլի զարգացումը ապրեցաւ Զեր շքեղ բաղաքին մէջ, ուր մեր եկեղեցին և իր ապաստարները գիտցան լուսաւոր էջ մը բանալ մեր պատմութեան մէջ, տպագրական արուեստի միջոցաւ առատապէս բաշխելով մեր ժողովուրդին՝ կենարար շունչը Աստուծոյ և յոյսը գիտութեան:

Այսօր, չորս հարիւր տարիներ յետոյ, ամբողջ մեր ազգը որ ի Հայաստան և ի ափիոս աշխարհի, երախտագէտ զգացումներով գեղուն կը միանայ Զեզի

բոլորիդ և յարգանքով ու ցնծութեամբ կը մասնակցի Ձեր ուրախութեան և Ձեր հանդիսութիւններուն:

Թող Տէրը անշէշ փառքի մէջ պահէ յիշատակը և վաստակը Թորախեցի Աբգար Դպիրին ու մեարդաստեղծ տառն ու տիպը հայկական:

Թող Տէրը անասաւն և շէն պահէ մեր սուրբ հաւատքի Տունը՝ եկեղեցին հայկական և ստեղծարար ազգը մեր հինաւորց:

Թող Տէրը խաղաղ ու ծաղկեալ պահէ պահպանէ պատմական Աթոռը Ձեր պատրիարքութեան՝ իր սուրբ տաճարներով և հաւատացեալ ժողովրդով:

«Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս և զվերակացոս ձեր ի Տէր, և զխրատիչս ձեր: Եւ համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոց նոցա. խաղաղութիւն արարէք ընդ միմեանս» (Ա. Թեա. Ե. 12—13):

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեւին ձեզ: Ամէն:

Գալուստի

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 20-ը սեպտեմբերի
1967 փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԶ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՐՄ. 622

